

Մամուլի հաղորդագրություն

Երևան, Հունիսի 3, 2025

Վեոլիա Հայաստան

Վերջին օրերին Երևանի Արաբկիր վարչական շրջանի տարբեր հատվածներում օրվա որոշակի ժամերին նկատվող ջրանջատումները տարբեր պատճառներ ունեն: Վարչական շրջանի Նաիրի Ջարյան, Բաբայան, Վահագն Դավթյան փողոցների անհատական տնատիրություններով, ինչպես նաև Ազատության պողոտայի անհատական տներով, 10 բազմաբնակարան շենքերով պարփակված թաղամասում՝ «Վեոլիա ջուր» ընկերության Պարտադիր կապիտալ աշխատանքների 2024 թվականի ծրագրով կապալառու կազմակերպությունը ջրամատակարարման համակարգի վերակառուցման վերջին փուլի աշխատանքներն է իրականացնում: Իսկ դա նշանակում է, որ վարչական շրջանի տարբեր հատվածներում հին ցանցը հատված առ հատված հանվում է շահագործումից և նոր կառուցած ջրագծերը միացվում են համակարգին: Այս բոլոր աշխատանքները, ցավոք, առանց ջրանջատման հնարավոր չէ իրականացնել: Ընկերությունը քաջ գիտակցելով սպառողների կրած անհարմարությունները՝ հավաստիացնում է, որ այս բոլոր դժվարությունները ժամանակավոր են, քանի որ մեկ ամիս անց արդեն արաբկիրցիները կունենան կանոնավոր և էլ ավելի որակյալ ջրամատակարարում:

Մյուս կողմից, ընկերության «Արաբկիր» շահագործման տեղամասն է վթարավերացման և ընթացիկ շահագործման աշխատանքներ իրականացնում տարբեր փողոցներում:

Հարգելի սպառողներ, վթարների կանխարգելման լավագույն ձևը ներդրումներն են համակարգում, ինչը հետևողականորեն իրականացվում է: Բայց նույնիսկ շինարարական աշխատանքների ավարտին, ինչպես արդեն վերը նշեցինք, նոր կառույցը շահագործման հանձնելու համար անհրաժեշտ է լինում կարճաժամկետ ջրազրկումներ կատարել:

Ընկերությունը լավ գիտակցում է, որ ջրամատակարարման կարճաժամկետ ընդհատումն անգամ դժգոհության ալիք է բարձրացնում, հատկապես ամռան օրերին: Սակայն հավատացնում ենք, որ յուրաքանչյուր վթարի ժամանակ մոբիլիզացվում են բոլոր ռեսուրսները՝ հնարավորինս արագ աշխատանքներն ավարտելու համար:

Հարգանքով՝
Հանրային կապերի ծառայություն

Կոնտակտներ

Կարինե Կարապետյան,
«Վեոլիա Ջուր» ՓԲԸ հանրային կապերի բաժին,
Հեռ.՝ +374 11.300-186 (340)

Էլ. հասցե՝ karine1.karapetyan@veolia.com